

ՄԱՅԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը— Ներքին տեսութիւն: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Անգլիա: Աւստրիա: Նամակ ֆրանսիայից: Նամակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր: «Մշակ» հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական, իման Եակովլէ:

ՔԱՂԱՔԱՎԱՍՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՏՔԵՐԸ

Գերմանական կայսր Վիլհելմի վրա ատրճանակ արձակելու մասին խօսեցին եւրոպական բոլոր լրագիրները: Լրագիրներից մի քանիսը կարծում են, որ այդ գործը մասնաւոր մարդու արած է, միւսները ասում են, որ անցքը, ի նկատի ունենալով կայսր Վիլհելմի ազդեցութիւնը ներկայ խառնված գործերի վրա, նրա համակրութիւնը դէպի Ռուսաստանը, ունի քաղաքական նշանակութիւն:

Եթէ յանցաւորին աջողվէր զրկել կեանքից Գերմանիայի միութեան հեղինակին, անկասկած քաղաքական գործերի մէջ մեծ փոփոխութիւններ կը լինէին:

Վերջին շաբաթվայ լուրերը աւելի պարզում են ներկայ անորոշ դրութիւնը: Եթէ նրանց վրա լաւ ուշադրութիւն դարձնենք, կարծես պատերազմը անփախչելի է:

«Правит. Вѣстн.» լրագրի հա-

մարներից մէկում մի յօդուած էր տպւած, որտեղ լրագիրը մեկնելով այն միտքը, թէ «ով կամենում է խաղաղութեան մէջ ապրել, պէտք է պատրաստ լինի պատերազմելու», հրաւիրում է ուսն հասարակութիւնը նուիրատուութիւններ անել կրէյսերները պատրաստելու համար: Նուիրատուութիւնները, ասում է լրագիրը, կարելի է ուղարկել ուղղակի Նորին Բարձրութեան Թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչին, որի հովանաւորութեան տակ կը լինի կրէյսերներ պատրաստող մասնաժողովը:

«Ոչ մի թշնամի ցամաքում, ասված է այդ յօդուածի մէջ, — Ռուսաստանի համար անհղ չէ, իսկ մի քանի տասնեակ կրէյսերներ, որոնք ցրված կը լինեն Մոսկուայի առևտրական ծովային ճանապարհների վրա, ահագին փաս կարող են տալ նրա առևտրին և այն ժամանակ շուտով կը հատնի Մոսկուայի ոսկին, որով այդ պետութիւնը պարծենում է»:

Այդ յօդուածից պարզ երևում է, որ Ռուսաստանը բոլորովին չը վախենալով Մոսկուայից հոգի վրա, պատրաստվում է ծովի վրա պատերազմել նրա հետ, փաստելով Մոսկուայի առևտրին:

Ինքնուրու հրատարակվող լրագիրներից մէկում Վիեննայի կառավարութիւնից թերագրած նամակ կար տպւած, որտեղ ասված է, թէ Աւստրիան պէտք է աշխատի Թիւրքիայից բաժանվող իշխանութիւններից իր առաջնորդութեամբ մի միացեալ սլավոնական պետութիւն կազմել, ինչպէս գերմանական միացած կայսրութիւնը: Մի և նոյն նամակի մէջ ասված է, որ այդ նպատակին հասնելու համար Աւստրիան երեք զորաբաժիններ պէտք է ուղարկէ մէկը արևելեան Գալիցիա, միւսը Տրանսիլանիա, իսկ երրորդը Բանատ, բացի սորանից պէտք է իր պատերազմական նաւատորմը ուղարկի Ալբանիայի և Մակեդոնիայի ափերի մօտ:

Այս պատերազմական պատրաստութիւնները տեսնվում են Ռուսաստանի դէմ:

Ուրեմն Աւստրիան աւելի մեծ թշնամի է հանդիսանում Ռուսաստանի համար, քան թէ Մոսկուան: Բաւական չէ, որ Աւստրիան թող չէ տալիս Ռուսաստանին շահվել պատերազմի հետևանքներից, այն յաղթութիւններից, որոնք հաղորաւոր մարդկերանց արհնով են ձեռք բերված, Աւստրիան կամենում է, առանց արհն

թափելու, պատերազմի հետևանքները դարձնել իր օգտին:

Այս բոլոր ասածները միայն լուրեր են, բայց վերջին ժամանակները մեզ համոզող ենթադրութիւնները գրեթէ միշտ իրագործվում էին:

Եթէ այս ենթադրութիւնը իրագործվի, աւելի վտանգաւոր կը լինի Ռուսաստանի համար, քան թէ Մոսկուայի պատրաստութիւնները, որ Աւստրիայի պէս Ռուսաստանին մօտիկ չէ:

Ղշմարիտ է այժմ Աւստրիան դեռ չէ կազմակերպում իր զօրքերը, բայց նա այդ շատ կարճ ժամանակի մէջ կարող է անել:

Մի կողմից Մոսկուայի պահանջում է Թիւրքիայի ամբողջութիւնը, միւս կողմից Աւստրիան ցանկանում է Թիւրքիայից բաժանվող երկիրներից Աւստրո-Ունգարիայի հետ միացեալ պետութիւն կազմել, իսկ Ռուսաստանը այդ երկուսի հակառակն է ցանկանում: Եթէ կոնգրէսը մինչև անգամ կայանայ, որ աներևակայելի է, այդ երեք պետութիւնների պահանջների համար շատ դժուար է չեզոք երկիր գտնել:

Վ. Տ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԻՎԱՆ ԵԱՎՈՒԼԻՉ»

(Պատկեր)

I

Նա 8—9 տարեկան էր, երբ մեռան նրա ծնողները:

Աչքերը ճաշողաձ, չորերը կեղտոտ, ոտնաբոկի, գլուխը անծոտ—սով կը նայէր նրա վրա առանց զգուշանալի... Անտէր, անտիրական նա թախառում էր փողոցներում և օրական հացը ձարում մի գարշիկի արհեստով... Ստախոսութիւն, քառութիւն, կեղծաւորվի, հաճոյանալ, շոյիւ—այս ամենը տարրացան նրա հոգու մէջ արդէն օրբանալու օրից...

Ատում էին նրան շատերը, շատերն էլ արժանացնում բռնուցքի դատաստանին...

«Գնդ վանէս» անուանում էին նրան ամենքը:

Անկիրթ և կոպիտ օրը նրապարակի դպրոցում այսպիսով պատրաստվում էր անպագայի փաստակար մի մարդը լինելու... Աւագակներն էին նրա ընկերները, իսկ փողոցը նրա ընտանիքն ու գերդաստանը...

Ձրկանքների տակ անող թունաւոր կեանքը առանց այդ էլ մեր «չար սխալի ծնած» մանուկին ընդունակ չինեց ամեն բանի:

Եւ անսանձ կեանքի կարիքները կազմակերպեցին նրա մէջ վերջում տոկուն և յաղթող ջանահնարութիւն:

Նա այսպիսով դարձաւ՝ կարուկ, տանող, աչքից մազ թուցնող, հաւաքող, պահող...

«Ղշաղ է, աչքերաց է, ձեռքի կուլայ է» վկայում էին վերջին ժամանակ ամենքը:

— Ո՛ւմ ապա պէտք չը գար այդպիսի մի գործիքը (հաջաթը):

— Ո՛ւմ պիտանայու չը լինէր մի այդպիսի «ձեռքի կուլայ»...

II

«Ես քեւ չակերտ կընդունեմ ատում էր վանէսին մի հաստավոր վաճառական, Սարուխանբեգով:

Ես քեղ ինձ մօտ կը պահեմ— չեմ գալ:

«Աչքիս վրա, աղա»:

Վանէսն ընդունվեց չակերտ:

Աղի հին չորերը հագած, մի կէպի գլուխը պոծեցրած նա քիչ թէ շատ մարդ դարձաւ:

Այնուհետև «Շակերտ վանո» անուանում էին նրան «Գող վանէսին» տեղ:

Կարմիր ոսկին սև օրվան համար է—նա միշտ կրկնում էր:

Բայց ճիշդից ժողովէր այդ անտէր ոսկիքը:

Ո՛վ էր ցանել, որ նա հաւաքէր:

Հնարը յաղթանակում է արդէնքներին:

Նա այնուհետև կամաց-կամաց դախլիցը, դանձանակացուցը, աղքատագրամիցը, հացի փողից—1 կոպէկ մայ տեղից, 1 կոպէկ մայ տեղից—միմեանց վրա դրեց դարձաւ՝ շահի, շահին—արասի, արասին—մանէթ, մանէթ—թուամն և կարմիր տասնանոցը ճոճապրեց, կրօնեց քամարի տակ: ... և այլն:

Անցան տարիներ:

Վանէսի ուժիկը տարեկան նշանակվեց 10 ռուբլ և սրա հետ էլ մեծացաւ պաշտօնը:

Նա այժմ Մեծ-ձակերտ էր:

III

Մեծ-ձակերտը տիրում է փողերի վրա:

Նա այլ ևս բացի, մուշտարիներին խաբելով, աղի դուքանը բերելուց, ոչինչ չէր անում:

Գութանը արեւ, ճաշ բերել, ջուր կրել—այս խիստ պաշտօնները տիրացան մանր ձակերտներին:

Նա այժմ մեծ միջոցներ ունէր ոսկիք ժողովելու: Նամակ էր տանում փօստը ձգելու. ձգում ծածուկ ոչնչացնում էր ճանապարհին նամակը, իսկ 8 կոպէկը դնում զրպանի մէջ:

Թօփերով չթեր, դիւթիւններով կոճակներ, փաթեթներով քուղեր, կապոցներով ասեղներ տանում էր մուշտարու տները և ամեն միջոց հանում էր իր բաժինը:

Կրկին 1 կոպէկ մայ տեղից, 1 կոպէկ մայ տեղից՝ դառնում էր շահի, շահին—արասի... Վերջապէս նոր կարմրանոցը դնում էր հին հետ...

Խաբում էր մուշտարուն, միւր վանէսը գող ու կեւ կուլ տալիս, շատ առնում, քիչ հատում... ցանում...

Եւ այս ամենին համար ստանում գող ու գողանանք և երբեմն էլ շահի ու արասի...

Անցան տարիներ:

Վանէսի վարձը հասաւ 5 թումանի և սրա հետ էլ փոխվեց պաշտօնը:

Նա դարձաւ պրիկաշչիկ—բաղձալի աստիճանը վաճառականութեան մէջ:

IV

Խոնարհ, նուաւոր—երեսին թքէր՝ ձայն չէր հանի մեր փորձառու պրիկաշչիկը:

Նա գիտեր (ազդուակի) և լաւ թէ վատ անունը գրել—Հասակը 18 տարեկան, հագուստը սիրուն, դէմքը գեղեցիկ—նա ունէր և մին արժանաւորութիւնը, որ բացի չը լավեց երկուսի ներքով մարդ խաբելը, կարող էր օրիորդներին գրաւել աղուհական ժպիտով...

Նա սովորեց հազար ցած ու ստոր կոտորվածքներով շատացնել մուշտարութիւնը...

Սուտ լուրերով իսկոյն բերձայի մէջ նա մեծ ճարպիկութեամբ բարձրացնում էր որ և իցէ մթերքի գինը, կամ վայր ձգում բոլորովին:

Նրա ոսկու աղբիւրը մեծ առատութեան մէջ էր: Կոպէկի գողը մանէթ ու թուման էր ծրպարացնում և թումանների տեղ 1000-ներ գօտիկը խրում...

Վանէսի ուժիկը հասաւ 600-ի: Նա մի օրը կնոջ շահով տուել էր 1000 ռ. ամսական 20 ռ. տոկոսով, որի գրաւական ստացել էր մի պուղից աւելի արծաթեղէն: Պառաւի աղվալ սիրտը մտաւ, նրա բաժինը յալիտակեց և տեղն ընկած ժամանակին ասում էլ էր:

«Ե՛ս, բան չունեմ, մարդ կարգացողին աղջիկ կը տայ...»

Վանէսը, ամեն բանի մէջ փող փնտռող Սարուխանբեգովի պրիկաշչիկը, մի օրից մի օր, բացի մեքենայօրէն ժամ գնալուց, լրագիր կարդար, ուսումնարան յաճախէր, հարցաքննութեան ներկայանար—այդ չը կար:

Նա ատում էր այն ամեն բանը, որից կոպէկի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐՔԻՆ ԻՑ մեզ գրում են. «Այս տարի թէ խաղողը և թէ ուրիշ մրգերը անասն են երևում: Թրթուրը դարձեալ երևում է ծառերի վրա, յոյս կայ, որ այգիները լաւ օգուտ ունենան:»

ԹԵԼԱԻՑ մեզ հաղորդում են, որ այդտեղ արդէն սկսվել են աշխատանքներ ասնիկացիայի համար: Փողոցները փորում են խողովակներ անցկացնելու համար, իսկ հողը թափում են փողոցի մէջ տեղը: Անձրիից յետոյ գիշերները մարդիկ թաղվում են այդ հողից գոյացած ցեղի մէջ:

Մարտի 10-ին ԹԵԼԱԻՑՈՒՄ ասնտիկ անձրև եկաւ: Շրջակայքում կայծակ է ընկեր:

ԹԵԼԱԻՑ մեզ գրում են. «Այստեղ մի նոր հիւանդութիւն է տարածվել, որ շատ նման է խոլերային: Հիւանդութիւնը սկսվում է սաստիկ փորացաւով: Կեռ այդ հիւանդութենից ոչ ոք չէ մեռել:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՊԻՒՍ

Անգլիական կառավարութիւնը հրատարակեց գիւղատնտեսական մի քանի գրութիւններ Կրիտ կղզում վերաբերեալ: Այդ գրվածների մեծ մասը ուղարկված է Կանդիայի բրիտանական հիւպատոս պ. Սանդլիթից որ իր կառավարութեան տեղեկութիւններ է հաղորդում Կրիտ կղզում ծագած խռովութիւնների և նրանց զսպելու համար Բ. Դրան գործադրած միջոցների վերաբերութեամբ: Փետրվար 17-ի գրութեան մէջ ասում է թէ Կրիտի քրիստոնէաները յօժար են ընդունելու որ և իցէ քաղաքականութիւն որ իրանց կազատէ Թիւրքիայի ուղղակի տիրապետութիւնից: Նրանց համար մի և նոյն է թէ Անգլիայի և թէ Յունաստանի պաշտպանութեան ներքե լինեն, միայն թէ ազատվեն թիւրքաց տիրապետութենից, և կամ ինքնավարութիւն հաստատվեն սուլթանի գերիշխանութեան ներքե, այն պայմանով որ իրանց ազատութիւնները ապահովվեն ինչպէս որ պէտք է: Վերջին բուհարութիւնը յայտնեց

հետ չը կար: Նա տեղեկութիւն հունէր ազգայնութեան հարցից իսկ մայրենի լեզուն որ փոշ չէր արտադրում, ցէն էր նրա մօտ...

«Азгасері...» ասում էր նա քիթը վեր բռնելով խեղճ խմբակիցների ու վարժապետների ետեքից:

«Армяшки!..» հոգու սառն արամաղրութեամբ փառաբանում էր իր ցեղակիցներին... Իրաւունք ունի. վկայում էին նրա համանման ընկերները:

Անցել էր 13 տարի, Սարախանքեզովի խանութի նշանատախտակի (վ. վիսկայի) վրա աւելացաւ «и К.» խօսքը: Վանէր ընկերացաւ իր խօշէի նիւն և այնուհետ...

Մարտի 10-ին, փարիզ ու Վիեննա եղաւ նրա գնալ-գալու տեղը:

Կոպէիի գողը այժմ կարողանում էր 1000-ներ կլանել այնպէս որ չուտով վայր ձգեց խեղճ Սարախանքեզովին և ինքը գլուխ բարձրացրեց նրա տեղը:

Նշանատախտակը նորոգվեց, որ յայտարարում էր կարմիր տառերով սպիտակ աստառի (Ֆօն վրա՝ «М.двѣй магазинъ Ивана Якулича»:

Պ. Իվան Նախուլիչ — այդպէս էին անուանում այժմ մեր վանէիսին:

«Ղ. միլիօն կարողութիւն... Ախպէր բախտի բան ա, էլի...»

Իվան Նախուլիչը մեծ արարօտի մէջ էր: Տարեկան ունէր 10 հազար եկամուտ:

Չը նայելով որ չար լեզուներն ասում էին, որ

որ Կրիտի բնակիչները շատ ոգևորված չեն Յունաստանի հետ միանալու համար և պատգամաւորները շատերը կաշառվելով տուած էին իրանց քուէները: Յունաստանի հետ միանալու գաղափարը խոր արմատներ չէ գցած ժողովուրդի սրտի մէջ:

Լիվլպուրում գործաւորները հրապարակական մի մեծ ժողով են արել և վիճաբանել են քննելու համար թէ Անգլիայի պիտանա առևտրական և արհեստական տաքնապը ինչ յարաբերութիւններ ունէ արեւելքում պատահած դէպքերի հետ: Պ. պ. Կլարսոն և Բրայտ որոնք հրաւիրված էին այդ ժողովին, նամակ են ուղարկել ներողութիւն խնդրելով որ չեն կարող ներկայ գտնվել, և մի քանի նկատողութիւններ են արել քաղաքական խնդրի վերաբերութեամբ:

Պ. Կլարսոն ասում է իր նամակի մէջ որ թէպէտ կառավարութեան անդամները մի քանիսը խօսում են թէ իրանք ցանկանում են խաղաղութիւն, բայց իրանց գործերը համոզելին եւրօպային որ այդ միջոցները ցանկանում են պատերազմ անել և եթէ խաղաղութիւնը մինչև այժմ պահպանված է, Անգլիայի գրութիւնը չէ դրա պատճառը: Արտաքին գործերի մինիստրի վարմունքը, գրում է նա, ստիպում է Ռուսաստանին համաձայնվել Աստրիայի հետ և վերահաստատել երեք կայսրերի գաշակցութիւնը: Պէտք է որ անգլիական ժողովուրդը կօնքրէսի կայսրաւոյց միայն բարիք սպասէ. այդ միայն բաւական է ազդեցութիւն կունենայ Անգլիայի քաղաքականութեան վառ հետևորդները արգելելու համար: Պ. Կլարսոն ասում է թէ յոյս ունէ որ դեռ երկար ժամանակ կապրի և կը կարողանայ մինչև վերջ կռւել միջխորհրդի անմիտ և անարիտ քաղաքականութեան դէմ և հասնել այն օրին որ անգլիական ամբողջ ժողովուրդը ցաւելով և մեծ վարմանքով կը յիշէ այժմեան միջխորհրդի նշանաւոր յիմարութիւնը:

Պ. Բրայտ գլխաւոր երեք կետերում գանգատվում է թագուհու միջխորհրդից. նախ որ միշտ խաբեցին համայնքների խորհրդարանին և անգլիական ժողովուրդին թէ իրանք աշխատում են խաղաղութեան պահպանութեան, մինչև որ իրանք զեղծվում էին այնպիսի գործերով որ կարող են յայտնապէս գրգռել պատերազմի: Յետոյ միշտ արգելքներ հանել ցին արեւելեան խնդիրը ճշդեպ քրիստոնէաների ազատութեան օգտակար կերպով լուծվելու դէմ, որ և իցէ կերպով չը համաձայնե

նա աւաղակ է, բայց հասարակութիւնը նրան ընտրեց հոգաբարձու և երեցիկին:

Մի քանի տարի չանցած Իվան Նախուլիչը ժառանգեց հազաւէր» տիտղոսը:

Բայց չուտով թշնամի մարդիկ արատաւորեցին խեղճին:

Ասում էին, թէ իբր պ. Իվան Նախուլիչը գողացել կերել է ուսումնարանի և եկեղեցու քաղցրիկ մանէթները:

Բայց ուրախվել չէ ան, որ մեր ազգասէրը 9,10 տուն մարեց հացից զրկելով խեղճ որբերին նրանց ունեցածը գրաւելով իր փողի շահումը...

— Թող ասեն, ես լաւ մարդ եմ, միւլիթարում էր ինքն իրան մեր վանէսը, որ այժմ 60 տարեկան հասակում նորից մկրտված կոչվում էր՝ ազգասէր Իվան Նախուլիչ Յուստուստուլով...

Իվան Նախուլիչը առաջի ատամներից զրկված խօսելիս լավամտացնելով Թրքոտող խակապէս ծեւրութեան հասակումն էր:

Այժմ ա՛նա կոչու ու կոպիտ նրա աւելի արծաթ, քան ս էր զգացող սիրտը արհեստական հնարներով ուղեց տաքանալ. որովհետեւ Ֆօնդիէվի 16 տարեկան աղջիկը լսում էր որ մեծ բաժինը, առն ու տեղ ունէր...

Ան էր քաշում Իվան Նախուլիչը, քթի ծուխը վեր էր լինում և երբ խեղճը ձեռքը ըսում էր գլխին, սպիտակ մազերը աչ ընկած ըրդի պէս թափվում էին թէյի բաժակի մէջ...

Մեր վաղեմի հնարագէտ որբը չը սանձաւարվեց և այս դէպքում:

վերով Ռուսաստանի կամ այլ եւրօպական տէրութիւնների հետ: Վերջապէս, աշխատեցին արգելել որ խեղցի և լաւ մտածող քաղաքացիները չը յայտնեն իրանց կարծիքները և այդ նպատակին հասնելու համար այնպիսի միտինգներ կազմել տվեցին որ աղմուկներով և խռովութիւններ հանելով չը թոյլատրեցին հանգարտ հրապարակաւօսներին ներկայանալ հասարակական բեմը և խօսել ժողովուրդի հետ: Պ. Բրայտ յանդիմանում է նաև կառավարութեան որ պատերազմի համար զօրաբանակներ է կազմում Հնդկաստանի մահմետականներից որոնք ոչ թիւր և ոչ իրանց համար լինելու ծախքը հաղորդված չեն պարլամենտին: Անգլիական ժողովուրդը, ասում է պ. Բրայտ, կը սկսի ինքն իրան հարցնել թէ արդեօք յետ և գնացել մինչև Կարլ Լի ժամանակները և թէ անգլիական ազատութիւնը և սահմանադրական սովորութիւնները այլ ևս երա՞զ են...: Նրկիրը և իր ամենաբարձր շահերը գտնվում են ապականված ձեռքերում և երբ մի կարենա՞ հետևում է այդպիսի քաղաքականութեան, կարելի է որ դաւաճանէ մի և նոյն ժամանակ թէ արքունի թագին և թէ ժողովուրդին:

Հրապարակական ժողովը որոշել է բողոքել կառավարութեան պատերազմանէր քաղաքականութեան դէմ, երկրի ամենաբարձր շահերին և վաճառականութեան զարգացման հակառակ համարելով նրան:

Հրապարակական ժողովը շնորհակալութեան քուէ է տուել պ. Կլարսոնի համար որ մինչև այժմ կռւեց կառավարութեան քաղաքականութեան դէմ արեւելեան խնդրի վերաբերութեամբ. նոյնպէս և պ. Բրայտի համար որ ի նամակը, ասված է ժողովուրդից ծափահարութիւններով ընդունված որոշումի մէջ, հաւատարիմ կերպով յայտնում է երկրի զգույնները:

ԱՒՍՏՐԻԱ

«Lloyd» լրագրին հաղորդում են թէ գեներալ Ֆիլիպպովիչ հրաման է ստացել 25,000 զօրք կենտրոնացնելու Սիսեկի մօտ: Եթէ այդ լուրը ստույգ է, դա մի ապացոյց է որ Աւստրիան կամենում է անշուշտ գրաւել Բօսնիան: Ինչպէս երեւում է, գաղթականների խնդրի վերաբերութեամբ Բ. Դրան հետ կղած բանակցութիւնները չեն բաւականացրել աւստրո-ունգարական կառավարութեան, որովհետեւ նոյն լրագիրը ասում է հետեւեալը:

Մտքումը գրած լինելով պսակվել անպատճառ Ֆօնդիէվի ոչ թէ աղջկայ, այլ հարստութեան վրա, նա արծաթեալ ատամներ սարքել տվեց բերանում, սևաներկով առատօրէն մազերն օծած, միխակը առամբ տակ պահած, որ բերնի հոտից մաքու չը մտնի, անուշահոտ իւզերի մէջ թաթախված — վերջապէս աշուղեցեց Ֆօնդիէվի փեսայ դառնալ...

Լաւ տուն, կաճ կարաւոր, այլի, սեփական ֆայէտոն, առաւ ուսուցիչ գետ չը ծնած վանիշի ու իլիւշի համար — այս ամեն իղճերին հասաւ...

Հասերը հաւատացնում էին թէ գաղափարներ չէ սիրում բարիքին, բայց սխալվում էին:

Իվան Նախուլիչը փաստով հերքեց այս արատաւոր կարծիքը:

Յայտնի էր, որ վերջին տարիներում նա մեծ հաւատարմութիւն ունենալով շատով փոխ էր առնել եկեղեցու փողերն ու հարուստներին գրաւ էր դրել. և որովհետեւ իր կնոջը շատ էր սիրում բոլոր իր կայքը ծածուկ հաստատեց կնոջ անուշտ ու ինքը զրազին կանգնեց...

«Պարեն Իվան Նախուլիչ...»

— Տանը չէ:

«Պարեն Իվան Նախուլիչ...»

— Հիւանդ է:

«Պարեն Իվան Նախուլիչ... փոքրեալ...»

— Վա՛, զահա՛ տարան... չունեմ... ասում էր նա և ձեռքերը գրպանում դրած հեռանում:

VII

«Ախպէր, էս ինչպէս են մարդիկ հաղարներ

«Եթէ Բ. Դուռը չէ կարողանում կամ չէ կամենում պաշտպանել հայրենիք վերադարձող գաղթականներին և նրանց ապրուստը հօգալ կամ թէ երկրիմը պատասխաններ է տալիս, Աւստրո-Ունգարիան սկզբից թոյլատրութիւն կը խնդրէ գաղթականներին պաշտպանելու աւստրո-ունգարական զօրքերով: Եթէ այդ թոյլատրութիւնը մերժվի կամ անկարելի պայմաններ առաջարկվին, Աւստրո-Ունգարիան խիղջ կը դիմէ ծայրայեղ միջոցների և գաղթականներին կուղարկէ իրանց հայրենիքը աւստրո-ունգարական զօրքերի պաշտպանութեամբ, որոնք կը մնան այնտեղ մինչև որ նոր կարգադրութիւն կը լինի: Աւստրիան չի վախենայ ոչ դիմադրութենից և ոչ բողոքից Բ. Դրան կողմից: Բ. Դուռը մինչև այժմ երկրիմի և մինչև անգամ բացասական պատասխաններ է տալիս, ուրեմն, եթէ չը փոխէ իր դիտաւորութիւնը, Աւստրո-Ունգարիան քիչ օրից յետոյ կը գրաւէ Բօսնիան և Հերցեգովինան: Բայց Բերլինից մայիսի 6-ին «Independance Belge» լրագրին հաղորդված մի մասնաւոր հեռագիր ասում է թէ Բօսնիայի գրաւվելու աւստրիական զօրքերից կարելի է որ պատճառ լինի մի քանի տէրութիւնների բողոքներուն և այդ կարող է վճատեցնել այն կուսակցութեան որ Վիեննայում երազում է միացնել այդ նահանգը Աւստրիայի հետ:

Կառավարութիւնը մտադիր է Վիեննայի և Պէշտի պարլամենտներին ներկայացնել մի առաջարկութիւն, պատգամաւորներից որոշված 60 միլիօն գուլդէնի վճարվելու վերաբերութեամբ: Այդ առաջարկութեան պատճառն այն է որ կառավարութիւնը ստիպված է պաշտպանական միջոցներ պատրաստել Տրանսիլվանիայում և Դալմատիայում Կատաւրօի բերանների մօտ:

Վիեննայի շրջակայքում Հօհեփարտի մօտ պտորատում են մի շքեղ ամառանոց Պարսկաստանի շահի համար: Նրեի թէ նասրէդդին շահը մտադիր է բաւական ժամանակ մնալ Վիեննայում:

ՆԱԽԱԿ ԳՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ 8 մայիսի

Վաղուց չէ, երբ Ֆրանսիան խից ամբողջ աւստրոլիան աշխարհի ուղադրութիւնը դէպի ինքը՝ այդ անցեալ տարւոյ մայիսի 16-ին էր, ուրեմն կարճ ժամանակ տաճկաւուսական պատերազմի հրատարակվելուց յետոյ: Այս տարի Ֆրանսիան

դիզում — հարց էր անում մի զազախեցի նայելով քաղաքի մի մեծ եռալարի չիւռնիկի վրա, կանգնած իր ընկերի մօտ բերանը բացած, ապշած-դարմացած...

— Մեզ պէս քրոջիք թափելով, պատասխան տվեց միւսը:

«Берегись!..» գոռում էր այս միջոցում սաւառակ փողոցի ծայրում որոտող կառքի զուգված ուղապանը:

Կառքի մէջ փորը ցլից արած, չափօլով, քաւթաւ միւրք քնքոյշ սեղի կողքին մեկնված, սիգարը զնչին, անհոգ թեք էր ընկել այնպէս, ինչպէս թէ կամ աշխարհին տէրը լինէր կամ եթէ այս միջադարձական չը համարվի, Փարիզի գլխաւորականների ժողովի անդամներից միւրը...

«Берегись! օ՛՜՜!..»

— Հեռու կաց քրքի, ասում են անձանոթ դադախեցիք և գլխարկները վեր ունում...

Կառքի մէջ ձգված պարոնը անցնում է արշաւելով և քթի տակ ժպտալիս չինացիների երկրքի որդին կարծում իրան...

«էս ո՛վ էր քրքի, կասես գիբերնատօրն ըէր...»

— Չէ, հմ, էդ ինչ թեղ ճանակցիր տօ...»

«Ո՞րք չէ... գուժերնատօրն էր...»

Խեղճները սխալվում էին, դա գուբերնատօրն էր:

Նա մեր վանէսն էր, որ այժմ գարձեղ է Իվան Նախուլիչ Յուստուստուլով...

Գր. Պապենց

կրկին ընդհանուր հետաքրքրութեան առարկայ է դառնալ: Բայց ինչ զանազանութիւն... այն մարդը, որ անցեալ տարի սպառնում էր Ֆրանսիան տակն ու վրա անել, որը ամբողջ եօթ ամիս հանգստութիւն չէր տալիս Ֆրանսիացիներին, որը դադարեցրեց իւրաքանչիւր աշխատանք, ինչքան ժամանակ էր անհրաժեշտ յոյսը դէպքի մէջ չընտել ապագան, այդ մի և նոյն անձը մարշալ Մակ-Մաֆոն, Ֆրանսիայի պրեզիդենտը, մայիսի 1-ին 1878 թ. Տրոյսկոյէրո պալատում չընկալուած ամեն երկրի իշխաններով, միլիոնաւոր խուռը բազմութեան առաջ, արտասանում է այս խօսքերը «Հասարակարկութեան անուանով եւ հրատարակում եմ, որ 1878 թ-ի համաշխարհային հանդէսը բացված է»: Ի՞նչ արդիւ խօսքեր... Ֆրանսիան դրանով հրաւիրում է ամբողջ երկրագունդը Փարիզ, որ այնտեղ ցոյց տան, հայել տան իրանց արած, չարածի համար: Ամեն երկրիներին գործաւորներ հաւաքված ի միասին, այսօր տօնում են նոցա խաղաղութեան և աշխատանքի աստուծուն... Ո՛վ, որ երկիրը, որ տէրութիւն չէ կարող վեհաձն լինել այդպիսի մի գործ կատարելով: Ֆրանսիան այն բազմաւոր դուրսեան մէջ է, որ բարձելով իր վրա բոլոր չարադրանքները, այդպիսի մի հանդէս ձեռնարկելով, վայելում է նաև նրա փառքը և ամբողջ աշխարհի հորհրակութիւնը ու համակրութիւնը: Համաշխարհային հանդէսը իբրև միակ հանդէս, — դա չէ կարող մի մեծ քաղաքական նշանակութիւն ունենալ, բայց այս տարվանք նաև ունէ նաև քաղաքական նշանակութիւն: Ո՛վ, որ միտը չէ 1870 — 71 տարիների սարսափելի պատերազմը և ի՞նչ չը գիտէ նրա՝ Ֆրանսիայի համար աղետալի հետեանքները... նրա երկու ամենապանծալի գաւառները — Էլզաս և Լոտարինգիան կորան, այդ տարիներում ամեն աշխատանք դադարեցաւ, հարկեր հաղորդուող կենդանի և աշխատող մարդիկ պատերազմի դաշտերում դիակացան, երկրի կառավարութեան ամբողջ սիւստեմը փոխվեցաւ, մօտիկ ապագան անգամ անսպասելի դուրսեան մէջ... այդ բոլոր տառապանքների վրա աւելացրէք նաև մի պիւսի 5 հազար միլիոն ֆրանկ աղատագրում, — և այն ժամանակ մի դադարաւոր կանգնեալ, թէ ինչ դրութեան մէջ էր Ֆրանսիան: 7 — 8 տարի արանից առաջ, Ահա, չանցաւ մի քանի տարիներ, և Ֆրանսիան կրկին կանգնած է Եւրոպայի առջև աւելի մեծ ուժով, աւելի մեծ փառքով, աւելի մեծ հարստութեամբ և աւելի մեծ համակրութեամբ, Զարմանալի ազդ չէ այս ազգը. այս, բոլորի հետ մենք էլ կրկնենք, որ Ֆրանսիական ազգը իր մարդկային հանձնարում միակն է, որ այնտեղ կանգնած է. նրա հանձնարը անպակաս է: Ֆրանսիան, մանաւանդ նրա հասարակարկութեան մեծամասնութիւնը ցանկացան այդ ապագոյցանել Եւրոպային, և ի հարկէ, նոքա հասան իրանց նպատակին ամբողջապէս, լրակատար:

Այժմ կը քանկանային մի քանի խօսք առել, թէ ինչ բան է համաշխարհային հանդէսը, որտեղից է առաջացած և ինչպէս նա դարձաւ: Համաշխարհային հանդիսի պատմութիւնը սկսւում է միայն նոր ժամանակներից, այն է՝ առաջինը նա արվեցաւ 1853 թ. Լոնդոնում, բայց նրա իսկական պատմութիւնը սկսում է արդէն աւելի վաղ ժամանակներից. միայն թէ 1853 թ-ի առաջ հանդէսը համաշխարհային չէր, այլ մասնաւոր, միայն մի ազգի համար և նրա սկզբնաւորութիւնը պէտք է որոնել կրկին Ֆրանսիայի մէջ: Երբեմն օրինակ թիֆլիսում էլ արվում են այդպիսի հանդէսներ, որոնք աւելի տնտեսական նշանակութիւն ունեն և իրենք հաւաքված են լինում կողմնորոշ անգամ երկրորդից. ով ինչ ունէ նշանաւոր, բերում է այնտեղ ցոյց տալու համար: Այդպէս, բայց ի հարկէ աւելի մեծ չափով, առաջին անգամ եղաւ Ֆրանսիայում կարծեմ 1793 թ. և այդպիսի հանդէս դեռ ոչ մի երկրում տեսած բան չէր: Այդ հանդիսում մասնակցեցին առաջ Ֆրանսիայի միայն մի քանի նահանգները, իսկ երբ մի քանի անգամ այդպիսի հանդէսներ արվեցան, այն ժամանակ սկսեցին մասնակցել համարեա բոլոր նահանգները, ամբողջ Ֆրանսիան: Մինչև 1853 թ. Ֆրանսիայում արվեցան մօտ 10 այդպիսի մեծ հանդէսներ: Զետոյ մտածեցին, որ եթէ այդպիսի մի մեծ հանդիսում ոչ թէ միայն Ֆրանսիայի բերքերը, ներկայացնողին, այլ և ուրիշ ազգերինը, այն ժամանակ դա աւելի օգնական կը լինի հոստոնով, որ մի ազգի բերքերը միւսի հետ համեմատելով, կարելի է լաւ և վատը չոնել և այն բնութեւն միայն, որը ամենաազգային է: Այդպիսով զանազան ազգերը աւելի կը մերձենան իրար, կը լինի աւելի մեծ յարգողակութիւն, մտքերի աւելի մեծ փոխանակութիւն, ու-

րին և աւելի նշանաւոր առաջադիմութիւն բոլոր արեստների մէջ: Բայց Ֆրանսիայի այդ գաղափարը վիճակված չէր իրան առաջին անգամ իրագործելու: Ֆրանսիայի քաղաքական դրութեան մէջ անցքեր պատահեցան, որոնք պատճառ եղան գործի յետաձգելուն: Դրանով օգտվեց Անգլիան և ինքը տուեց առաջին անգամ համաշխարհային հանդէս, որը և տեղի ունեցաւ Լոնդոնում 1852 թ-ին: Այդպէս սկսվեցաւ և արդէն երեք տարուց յետ 1855 թ. մի համ. հանդէս արվեցաւ Փարիզում: Զետաւայ երկու հանդէսները եղան Փարիզում՝ 1863 և 67 թ-ներին: Հինգերորդը արվեցաւ Վիեննայում 1873 թ., վեցերորդը Ֆլադրեկիայում 1876 թ. և վերջապէս եօթներորդը՝ կրկին Փարիզում 1878 թ.: Եւ զգու՛ս եմ, որ շատերին դեռ մոռնէ, թէ արեւօք ինչ բան է համ. հանդէսը, թէ ինչ դէպք ունէ նա, ինչ մեծութիւն և այլն. և իսկ, ով այդպիսի բան չէ տեսել, նա ամենահիշատակ պատկերներից անգամ չէ կարող իրան մի իսկական քաղաքար կազմել նրա մասին:

Խօսենք այս տարվայ Փարիզի համաշխարհային հանդիսի մասին: Նրեակայեցէք մի հարթ, լայն և ընդարձակ դաշտ, քաղաքի մէջ կամ նորա մի մասում: Այդ դաշտի անունն է՝ «Champs de Mars» (Մարտի դաշտ): Նրեակայեցէք այդպիսի մի տեղում մի հատ շինութիւն, որի երկարութիւնն է մօտ 1200 մետր (մօտ 1700 արշին) և լայնութիւնը մօտ 550 մետր (770 արշին): Այդ անագին շինութիւնը որը մի հարկանի է, բայց առաստաղը շատ բարձր, բաժանված է սենեակների և դաշտերէնների, ինքնեցող կարող է ի հարկէ երեւակայել, թէ այդ դաշտերէններից մի քանիսը ինչ երկարութեան կարող են լինել... մի ծայրից միւսը հազիւ տեսանելի է: — Այդ անագին շինութիւնը բաժանված է ազգերի. նրա համարեա կէսը պատկանում է Ֆրանսիացիներին. միւս կէսը բաժանված է օտար ազգերի մէջ. օտարականներից ամենամեծը անգլիացիներինն է, յետոյ գալիս են իտալական, բարձր, աւստրիական, սպանիական, չիլիացիական, ռուսական, նորվեգական, չիլիական, դանիական, պարսկական, չինական, եպանական, ամերիկական և այլն և այլն. և այսպէս իւրաքանչիւր ազգ ունէ իր բաժինը: (Գերմանիան չէ մասնակցում, երկի սուգ է պահում):

Իւրաքանչիւր ազգ իր երկրից բերել է ռուսկ իր սեփական երկրի բերքերը և փարբիկանանքը. ֆրանսիական բաժնում դուք կը տեսնէք, օրինակ մի սենեակում՝ մեքենաներ, միւս սենեակում՝ մեծաքանակէն, միւսում՝ ապակեղէններ (շիշեր, բաժակներ, ջահեր և այլն), միւսում՝ ատաղձադրծական առարկաներ (հիւսալի աթոռներ, բաղկաթոռներ սեղանների և այլն), միւսում՝ բրդիլանտներ և նոցա տաշելու մեքենաներ, յետոյ լուսանկարներ, ֆրանսիացիներից նկարած պատկերներ, արձաններ, քիւտներ և այլն և այլն, մի առ մի համարը դրականապէս անկարելի է, որովհետեւ եթէ փորձէք մանգալ այդ սենեակների մէջ, 3 — 4 ժամում այդ իրերը թեթեւ նայելով անգամ, հաղիւ թէ կարողանաք միայն ֆրանսիական բաժնի 1/5 նայել:

Բացի այդ միակ. բայց անագին շինութիւնից, նրա դէմ հանդէպ Մէն գետի միւս ափում կանգնած է մի վեթիսարի շինութիւն. դա Տրոյսկոյէրո՝ անուանած պալատն է, նոյն իսկ հանդիսի համար շինած. նրա առաջ մի անագին հրապարակ է, իսկ անմիջապէս նրա առաջ մի մեծ աւազան, կանաչաւ ֆօնտաններով և ոսկեգօծ արձաններով: Հրապարակի կողքերին կան զանազան շինութիւններ, զանազան ազգութիւնների պատկերներ, նրանցից մէկը, օրինակ, ներկայացնում է չիլիացիական գիւղական ունու, միւսը՝ չիլիական և այլն բայց նրանցից ամենահետաքրքրականը անկասկած չինական, եպանական և պարսկական տներն են: Պարսկական տները մեծ չէ, հասարակ մեծութեան, իսկ մէջը բոլորը ապակիներով ծածկած, սկսած ամենափոքր մի քանիսն ամբողջ պատիկ է ամենամեծը՝ գուցէ մի սանտիմետրի մեծութեամբ բոլոր այդ ապակիների թիւը կարծեմ հասնում է մօտ 1 միլիոն 200 հազարի: Կարող էք երեակայել... թոյնելով մանրամասնութիւնները աւելի ուշ զի պուածի, պիտի աւելցրած, որ այդ շինութիւնների գործաւորները և մշակները կրկին նոյն ազգութիւններին են պատկանում: Ամեն ազգութիւնները կարող կարող անցնում են ձեր աչքի առջև չինացիք, եպանացիք, հոլանդացիք, հոլանդացիք, Ամերիկայի, այդ, նաև շատ ամերիկական ազգութիւններ իրանց ազգային հագուստներով: Օտարականների այցելութիւնները անագին են. երէկ, օրինակ, (մի օրվայ մէջ) 3600 այ-

ցելուներ են եղել. ժամանակով աւելի կը բազմանան. — Մուտքը թանկ չէ. իւրաքանչիւր անգամ մի ֆրանկ, և կարելի է մէջը մնալ մինչև երեկոյան ժամը 6-ը, որովհետեւ այդ ժամին դռները փակվում են:

Վերջացնելով մեր յօդուածը, յայտենք թէ մայիսի 1-ին, հանդիսի բացման օրը, որքան ծախսեր են եղել զանազան անձերից:

Դրօշակներ.	1,255,000 ֆր.
Թղթի լապտերներ.	195,000 »
Մուտք.	150,000 »
Շքեղութիւնների.	20,000 »
Գոյնաւոր բաժակներ.	3000 »
	1,623,000 ֆր.

Աւելացնենք դրան Փարիզի առանձին տուած գումարը 50,000 ֆր. և տէրութենից տուած 30,000 ֆր. դրօշակների համար, կը ստանանք մի պատուական թիւ 1,700,000 ֆր., որը ծախսված է միայն առաջին օրը՝ հանդէսը փառաբանելու:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Գաւթ, 26 ապրիլի

Նորին մեծութիւն պարսից Նատր-Էդրին շահը իր բազմաթիւ ուղեկիցներով ապրիլի 17-ին մըտաւ Գաւթ քաղաքը: Շահին զիմաւորեցին մինչև խալաթ-Ռուշան անուանած տեղը Գաւթի երեկոյ պաշտօնականները, Եւրոպական պետութիւնների հիւպատոսները, Ատրպատականի հայոց առաջնորդ սրբազան Անդրէաս արքեպիսկոպոսը մի քանի նշանաւոր հայերի հետ: Ժամի 1 1/2 ին կէս օրից յետոյ թիւզանօթիների որոտումը յայտնեց Շահի գալը: Մեծ փողոցի երկու կողմը անագին բազմութիւն էր հաւաքված: Հայերի համար առանձին տեղ կար նշանակած, որտեղ նրանք կանգնել էին հետեւեալ կարգով. մի կողմը զգեստաւորված հոգեւորականները խաչերով և խաչվառներով, միւս կողմը հայ ուսուցիչները — տեղական դպրոցի աշակերտների հետ և ժողովուրդը: Երբ Շահը մօտեցաւ հայ երեխաներին, նրանք միաձայն երգեցին մի պատշաճաւոր ձայնագրված երգ: Նորին մեծութիւն փոխը երեսին մինչև վերջը լսեց հայ մանուկների երգը, որ բաւական երկար էր: Այդ տեղից Շահը ուղեւորվեց Շահապի այգին, որտեղ նրա համար հարկաւոր պատրաստութիւնները տեսած էին:

Շահին ուղեկցում էին տաղաւաղաւոր, սպասաւոր, թաղաժառանգը, Ատրպատականի ընդհանուր նահանգապետը, արտաքին գործերի նախարարը, քաղաքապետը, ուլեմներ և ուրիշ շատ նշանաւոր անձինք:

Հինգ օր Գաւթէմում մնալուց յետոյ նորին մեծութիւնը ուղեւորվեց դէպի Ռուսաստան նայն ուղեկիցներով, իսկ տեղական պաշտօնականները ճանապարհ դրին մինչ Զուլֆա:

Մ. Բ. Փ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Polit. Corr.» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից մայիսի 9-ից, որ Ռուսաց զլլաւոր բանակի և Բ. Գրան մէջ եղած բանակցութիւնները բերդերի դատարկելու մասին արագ կերպով են ընթանում: Ռուսները ինչպէս երեւում է, մօտաժող են Սան-Ստեֆանօ թողնել, բայց նրանց յետ քաջվելու սահմանների վերաբերութեամբ, մինչև այժմ ոչինչ զբաղան բան յայտնի չէ: Բ. Գուռը պահանջում է, որ ռուսները դէպի Ադրիանապոլ յետ քաջվեն, իսկ ռուսները մտածում են մինչև Զատալլի կամ Զորլու քաջվել: Ռուսաց զլլաւոր բանակը յայտնում է որ այս անգամայի վերաբերութեամբ հարկաւոր է որ Պետերբուրգից կարգաւորութիւններ ստանայ: Այնուամենայնիւ, ռուսաց զօրքերի մի մասը այս թուղթին թողնում է Սան-Ստեֆանօ և նրա չըջականները և տեղաւորվում է մօտակալ բարձրութիւնների վրա: Զօրքերի այդ տեղաւորվելու պատճառը առողջական պայմաններն են, Աստրո-Վոդարան ենթադրում է, որ կոմս Զիլին վերադառնալով Կ. Պոլիս (նրան սպասում են այսօր) կը սկսի բանակցութիւնները բօսնիական գաղթականներին վերադարձնելու մասին: Նրանք սպասում են որ նա այս միջոցին կը դիմի եկող ամսին:

«Daily Telegraph» լրագրին Կ. Պոլսից հա-

ղորդում են, մայիսի 6-ից, որ Սադիկ և Սափիէ փաշաները կրկին այցելեցին Սան-Ստեֆանօ, ռուսաց կառավարութեանը բացատրելու, որ ներկայ հանգամանքներում թիւրքերի համար անկարելի է Գուսայի վրա գտնված բերդերը մարել: Բայց գնեալը Տօպէքէնը ցոյց տուեց այս հարցը իբրև շատ ստիպողական և մեծ նշանակութիւն ունեցող: Նրա խօսքերով, Բ. Գրան պահանջը նա պէտք է հաղորդի Պետերբուրգ և վստենում է, որ անախորժ պատասխան կը ստանայ:

«Politische Correspondenz» լրագրին հաղորդում են Ս. Պետերբուրգից թէ կոմս Զուլալով չէ գալիս Ս. Պետերբուրգ իշխան Գորչակօվին յաջորդելու համար: Նա պէտք է որ տեղեկութիւններ տայ Անգլիայի հետ եղած բանակցութիւնների վերաբերութեամբ և այդ է միայն իր ճանապարհորդութեան նպատակը:

«Ալեքսանդրիայից մայիսի 5-ին հեռագրում են «Daily News» լրագրին թէ անգլիական չորս զորաւոր պատերազմական սպանվում են Պօրտ-Սայիտում. պատրաստութիւններ են լինում հնդկական զօրքերի եղկպոս փոխարեւում համար:

«Politische Correspondenz» լրագրին հաղորդում են Ս. Պետերբուրգից թէ կոմս Զուլալով չէ գալիս Ս. Պետերբուրգ իշխան Գորչակօվին յաջորդելու համար: Նա պէտք է որ տեղեկութիւններ տայ Անգլիայի հետ եղած բանակցութիւնների վերաբերութեամբ և այդ է միայն իր ճանապարհորդութեան նպատակը:

«Ալեքսանդրիայից մայիսի 5-ին» (Գնդապետ (կօլօնել) Ալփօ յանձնեց ռուսական կառավարութեան կողմից Բուսինիայի աստեղագաղթ մեծ խաչի շքանշանը Գիւրգ թագաւորին, Կ. Կոստանդնուպոլսին և պ. Կէլիանիսին: Լրագրիները համարում են գնդապետ Ալփօյի այստեղ գալը իբրև մի նշան Բուսինիային Զուլալուտանի հետ համաձայնվելու, արեւելեան պետութիւնների դաշնակցութիւն կազմելու համար:»

Կ. Պոլսից հեռագրում են հետեւալը մայիսի 4-ին: «Ռուսների հեռաւոր Սան-Ստեֆանօյից դեռ որովայն չէ: Այդ գիւրգը գտնվող զօրքերի մի մասը գնալով է բանակ դնել չըջակալ բարձունքներում, միայն առողջապահական նպատակով: Զօրքերի մեծ մասը մնում է Սան-Ստեֆանօյում: Բաթումի մէջ մահմետականների յուզմունքը շարունակվում է: Թրակիայի մահմետականների ապստամբութիւնը ճնշված է: խաղաղութիւնը վերահաստատվում է Ֆիլիպպոլիսում:»

«Թուրքաց սուլթանը մի արտակարգ դեպքին ուղարկել Լուսի, նոր պապի գահակալութիւնը հորհարելու համար: Սուլթանը առաջարկութիւններ է արել նաև Թուրքայի հայ կաթօլիկների և վատիկանի մէջ եղած վէճը լուծելու և յարաբերութիւնները վերահաստատելու համար:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՎԻԵՆԱ, 10/22 մայիսի: «Pol. Cor.» լրագրին հեռագրում են, որ Չեխօթորիայի իշխան Նիկոլայոս մեղադրում է Թուրքիային որ նա Ալեքսիայի վրա յարձակումն է պատրաստում:

ԼՕՆԻՍ, 10/22 մայիսի: Շուվալով հասաւ Լոնդոն: Այսօր մինիստրների խորհուրդ կար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի: Այս րօպէիս հասաւ այստեղ Պարսից Շահը որին զիմաւորեց Կայսրը Օղոստափառ անձանց և զենեարիտների հետ, նոյնպէս և հասարակութեան մեծ բազմութիւնը: Փողոցների զարդարվեցան դրօշակներով: Եղուց մեծ զօրախաղ կը լինի:

Կ. ՊՕԼԻՍ, 9/21 մայիսի: Զորադանի պալատի առջև անկարգութիւններ պատահեցան: Ժողովրդից 25 մարդ սպանված են, նոյնքան հոգի սպանվեցան և զենուարներից: Նախկին սուլթան Մուրադ յայտնեց որ նա մասնակից չէ այդ անցքին: Կատարվում են կայանաւորութիւններ: Մոլդային մինիստր հրտարեցրած է իր պաշտօնից, նրա տեղը նշանակված է Վեսեյին-փաշա:

ԼՕՆԻՍ, 10/22 մայիսի: Համայնքների ժողովում Գլադստոն աստիկ կերպով խօսեց տէրութեան գործունէութեան եղանակի դէմ: անկող որ տէրութիւնը խախտում է օրէնքները և ճնշում է ժողովրդական ազատութիւնը: Կօնքէրը երեկ կը գումարով յուսնաւանդ:

